ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.20. Չինաստան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները

• • •

Չինաստանի ցամաքային սահմանները Հնդկաստանի, Կենտրոնական Ասիայի երկրների և Մոնղոլիայի հետ անցնում են դժվարամատչելի լեռներով և անապատներով: Քաղաքաաշխարհագրական առումով Չինաստանի դերը շատ անբարենպաստ է եղել միջին դարերում: 12-րդ դարից սկսած երկիրը պարբերաբար ենթարկվել է հյուսիսից թափանցած քոչվոր ու ռազմատենչ ցեղերի՝ մոնղոլների և մանջուրների ասպատակություններին: Դա էր նաև «Չինական մեծ պարսպի» կառուցման գլխավոր պատճառը: Չինաստանը շատ հեռու է նաև Եվրոպական քաղաքակրթության օջախներից:

• • •

Չինաստանի ***բնական պայմանները ու ռեսուրսները:*** Տարածքի մեծ ձգվածությունը և բարձրաչափական տարբերությունները պայմանավորել են բնական պայմանների և ռեսուրսների բազմազանությունը:Արևմտյան մասը առավելապես լեռնային ու սարահարթային է: Այստեղ տարածվում է **Տիբեթի** բարձրավանդակը, որի միջին բարձրությունը ծովի մակարդակից ավելի քան 4000մ է, որի համար էլ այն անվանում են «Երկրի տանիք»: Տիբեթի կլիման անվանում են լուսնային (փորձե՛ք բացատրել): Արևմուտքում տարածվում են **Տյան Շանի** արևելյան լեռնաճյուղերը, **Կունլուն** լեռները, հյուսիսում՝ Ալթայան լեռների հարավային լեռնաճյուղերը, հարավում՝ **Հիմալայները:**

• • •

Չինաստանը հարուստ է բազմատեսակ ***օգտակար հանածոների*** պաշարներով: Երկրի հյուսիսում և հարավարևմուտքում առկա են ածխի խոշոր

պաշարներ (2,5 տրլն.տ.): Ածխի արդյունահանմամբ Չինաստանը աշխարհի առաջատարն է: Հյուսիսարևելքում ու հյուսիսում կան նավթի զգալի պաշարներ: Մետաղական հանածոներից առկա են երկաթաքարի, ալյումինի հումքի, մանգանի, պղնձի, մոլիբդենի, սնդիկի, կապարի, ցինկի, վոլֆրամի, ուրանի պաշարներ: Ոչ մետաղականից՝ ֆոսֆորիտի, կերակրի աղի և այլ հանածոների պաշարներ:

Բազմազան են նաև Չինաստանի կլիմայական պայմանները: Արևելքում կլիման ***բարեխառն և մերձարևադարձային մուսոնային է***, արևմուտքում ու հյուսիսում՝ չորային է, որի ազդեցությամբ արևմուտքում ձևավորվել է **Տակլա Մական**, իսկ հյուսիսում՝ **Գոբի** անապատը: Տեղումների քանակը հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք նվազում է՝ 1500մմ-ից հասնելով 200մմ-ի:

Ռելիեֆի, կլիմայական պայմանների, հողաբուսական ծածկի բազմազանությունը էապես ազդում է նաև մարդու տնտեսական գործունեության վրա: Այդ իսկ պատճառով երկիրը բաժանվում է չորս շրջանների՝ հյուսիսային, հարավային, հյուսիս-արևմտյան ու Տիբեթի բարձրավանդակ: Երկրի հյուսիսային շրջանների կլիմայի վրա սեպտեմբերից ապրիլ ընկած ժամանակաշրջանում ազդում են Սիբիրից և Մոնղոլիայից թափանցած սառը և չոր օդային զանգվածները:

• • •

Օգտագործվում է նաև լճերի և 2000 ջրամբարների ջուրը: Ջրային ռեսուրսների հիմնախնդրի պատճառներից մեկն էլ ջրի գլխավոր սպառողների՝ բնակչության, գլխավոր սպառողի՝ մշակվող հողատարածությունների անհամամասն տեղաբաշխվածությունն է: Օրինակ՝ հյուսիսում երկրի ջրային պաշարների 20%-ն է, բնակչության՝ 47%-ը, մշակվող հողատարածությունների՝ 65%-ը, հարավում՝ համապատասխանաբար՝ 80%-ը, 53%-ը, 35%-ը:

Չինաստանի հյուսիսում սահմանային գետ է **Ամուրը՝** 4350 կմ երկարությամբ, որից 3101 կմ-ը հոսում է բուն Չինաստանի տարածքով: Խոշոր գետերից է նաև **Սիցզյանը:**

• • •

1949թ. հոկտեմբերի 1-ին Պեկինի բնակչությունը Ծյանանմեն հրապարակում հավաքվեց տոնական հանրահավաքի: Կենտրոնական ժողովրդական կառավարության նախագահ Մաո Ցզեդունը հանդիսավոր կերպով հրապարակեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պաշտոնական

ստեղծման մասին հռչակագիրը:

Աշխարհագրական դիրքը և սահմանները: Չինաստանը արևելքում ելք ունի դեպի Խաղաղ օվկիանոսի մասը կազմող **Դեղին**, **Արևելաչինական**, **Հարավչինական** ծովեր, ինչը դրական ազդեցություն է թողնում երկրի տնտեսական զարգացման ու միջազգային տնտեսական հարաբերությունների վրա: Այն Չինաստանը Խաղաղ օվկիանոսի ավազանի երկրների հետ (Ճապոնիա, ԱՄՆ, Ավստրալիա) կապող կարևոր օղակ է:

Քաղաքաաշխարհագրական տեսանկյունից կարևոր է Չինաստանի դիրքը հարևան երկրների նկատմամբ: Վերջին շրջանում զգալի առաջընթաց կա հյուսիսային հարևան Ռուսաստանի հետ տնտեսական հարաբերություններում:

• • •

Չինաստանին են պատկանում մեծ ու փոքր 7,6 հազար կղզիներ, որոնցից ամենամեծը **Թայվանն** է (36 հազ. քառ. կմ), որն իրեն հռչակել է անկախ ու վերցրել «Չինական Հանրապետություն» պաշտոնական անունը: Նրա անկախությունը Չինական Ժողովրդական Հանրապետությունը չի ճանաչում: Մեծությամբ երկրորդ կղզին **Հայնանն** է՝ (34 հազ. քառ. կմ): 1997թ-ին, ավելի քան 100 տարի Անգլիային պատկանելուց հետո **Հոնկոնգը** (Սյանգան) վերամիավորվեց Չինաստանին: 1999թ-ին վերամիավորվեց **Մակաոն** (Առմին), որը պատկանում էր Պորտուգալիային:

• • •

Չինաստանում կա ավելի քան 1500 գետ: Երկիրը հարուստ է ջրաէներգետիկ ռեսուրսներով, որով աշխարհում գրավում է առաջին տեղը, բայց մեկ շնչի հաշվով այդ ցուցանիշը զգալի ցածր է: Պատճառն այն է, որ երկրի ջրաէներգետիկական ներուժը լավ չի օգտագործվում: Բացի այդ, օգտագործվող ջրի ծավալի կտրուկ աճի պայմաններում ջրային հսկայական ռեսուրսները չեն բավականացնում՝ ոռոգում, կենցաղային և արդյունաբերական օգտագործմանը: Վերջինիս արդյունքում էլ ջրերի մեծ մասն աղտոտվում է և դառնում անօգտագործելի:

• • •

Չինաստանի ՏԱԴ-ի բացասական կողմը Եվրոպայի զարգացած երկրներից, տնտեսական կենտրոններից ունեցած մեծ հեռավորությունն է: Գնացքը Բեյջինից ՌԴ մայրաքաղաք Մոսկվա է հասնում գրեթե մեկ շաբաթում,

Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ ավելի երկար ժամանակում:

• • •

Հիմալայների 11 գագաթներ ունեն ավելի քան 8000 մ բարձրություն (**Կանչենջանգա**, **Նանգապարբաթ**, **Լհոցզե**, **Անապուռնա**, **Մակալու** և այլն):

• • •

Գոյություն ունեցող գրական, հնագիտական աղբյուրների և գրածոների համաձայն չինական հիերոգլիֆներն ունեն ավելի քան հինգհազարամյա պատմություն: Հիերոգլիֆների առաջացման պատմությունը համարվում է նաև չինական հին քաղաքակրթության սկիզբը: Առավել շատ օգտագործվող հիերոգլիֆների թիվը մոտ 3500 է: